

ԻՆՉՊԵՍ ՉՏՆԵԼ CASp ՄԸ

CASp մը գտնելու համար այցելեցե՛ք [DSA-ի CASp կայքէջը](#) եւ սեղմեցե՛ք «Վաւերացուած Մատչելիութեան Մասնագէտներու Ցանկ» (List of Certified Access Specialists) յղումին վրայ: «Do Inspections» սիւնակին մէջ «Այո» նշումով ցուցակագրուած CASp-ները մատչելի են վարձուելու համար:

ԻՆՉ ՊԵՏՔ Է ՅԻՇԵԼ ԱՏՈՒԳՈՒՄԵՆ ԵՏՔ

1. ՊԱՅԵՑԵՔ CASp-Ի ԱՏՈՒԳՄԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒԹԻՒՆԸ ԶԵՐ ՓԱՏԱԹՈՒՂԹԵՐՈՒՆ ՄԷՋ:

Հաշուետուութիւնը գաղտնի է եւ պետք է բաժնուի միայն իրաւաբանական խորհրդատուի ցուցումով, կամ եթէ օրէնքով այլապէս կը պահանջուի: Սակայն, կրնաք այս հաշուետուութիւնը բաժնուիլ այն շինարարութեան մասնագէտներուն հետ, զորս կը վարձեք՝ համապատասխանութիւնը ապահովելու համար:

2. ՀԵՏԵԻՑԵՔ ԶԵՐ ԲԱՐԵԼԱՒՈՒՄՆԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԻՆ:


Ասիկա կարելորդ է, որովհետեւ ցոյց կու տայ, որ դուք մտադիր էք հետեւելու օրէնքին եւ համապատասխան ըլլալու:

3. ՊԱՅՊԱՆԵՑԵՔ ԶԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՉԵԼԻ ՑԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Սահմանեցե՛ք ծրագիր մը՝ համապատասխանութիւնը պահպանելու համար: Հարցուցե՛ք ձեր CASp-ին, թէ շինարարութեան հետ կապուած մատչելիութեան ո՞ր չափանիշները կը պահանջեն պարբերական պահպանում, եւ սահմանեցե՛ք քաղաքականութիւն մը՝ պահպանման անհրաժեշտութիւնները կանոնաւոր կերպով ստուգելու համար: Վերանայեցե՛ք գործառնական այն քաղաքականութիւնները, որոնք կրնան ժամանակ առ ժամանակ ազդել համապատասխանութեան վրայ, եւ սահմանեցե՛ք ընթացակարգեր՝ ապահովելու համար, որ մատչելիութիւնը ապահովուած ըլլայ: Տեղեկացուցե՛ք ձեր աշխատակիցներուն այն պահպանման եւ գործառնական քաղաքականութիւններուն մասին, որոնք կ'ազդեն ձեր հաստատութեան մատչելիութեան վրայ:

4. ԶԵՐ ԻՐԱՒԱԿԱՆ ԱՐՏՈՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ «ԺԱՄԿԵՏ ՉՈՒՆԻՆ»:

Երբ ձեր հաստատութիւնը CASp-ի մը կողմէ ստուգուած է, կրկնակի ստուգումի պատճառ չկայ, եթէ ձեր հաստատութեան մէջ բարելաւումներ կամ փոփոխութիւններ չկատարեք: Եթէ ձեր հաստատութեան մէջ բարելաւումներ կը կատարեք, որոնք արտօնագիր կը պահանջեն, խնդրեցե՛ք տեղական շինարարութեան բաժանմունքէն, որ ձեր վերջնական ստուգումը կատարէ իրենց աշխատակազմի CASp-ը, որպէսզի ստուգուած տարածքին համար ձեր իրաւական արտօնութիւնները պահպանուին:



Գործարարներուն եւ անշարժ գոյքի սեփականատէրերուն համար՝ ապահովելու համար, որ իրենց հաստատութիւնները մատչելի ըլլան հաշմանդամութիւն ունեցող անձերուն

www.dgs.ca.gov/DSA/Resources/CASp-Property-Inspection

ՎԱՐՁԵՑԷՔ ՎԱԽԵՐԱՑՈՒԱԾ ՄԱՏՉԵԼԻՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԳԷՏ ՄԸ՝ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՐՈՇԵԼՈՒ, ԹԵ ԶԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԷ՝ ՄԱՏՉԵԼԻՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐՈՒՆ:

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԳԻՏՆԱԼ CASp-Ի ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Վաւերացուած Մատչելիութեան Մասնագետները (CASp) քննութիւն անցած են՝ Նահանգային եւ դաշնային մատչելիութեան չափանիշներու իրենց գիտելիքները ստուգելու համար: CASp-ի կողմէ կատարուած ստուգումով եւ տրամադրուած հաշուետուութեամբ, ձեր հաստատութեան մատչելիութեան կարգավիճակը իմանալու կողքին, կրնաք Նաեւ ստանալ իրաւական արտօնութիւններ:

ԻՐԱԲԱԿԱՆ ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆՆԵՐ

- Պահանջեցէ՛ք վաղաժամ գնահատման խորհրդաժողով մը:
- Ստացէ՛ք դատական ընթացակարգերու 90-օրեայ կասեցում:
- Նուազեցուցէ՛ք օրէնքով սահմանուած Նուազագոյն վնասուց հատուցումը՝ \$4,000-էն \$1,000-ի, եթէ շինարարութեան հետ կապուած մատչելիութեան պահանջի խախտում մը արձանագրուի եւ դուք այդ խախտումը ուղղէք 60 օրուան ընթացքին:
- Յաւելեալ արտօնութիւններ՝ որակաւորուած փոքր ձեռնարկութիւններու համար:

Ստուգուած հաստատութիւնը պարտադիր չէ, որ համապատասխանէ շինարարութեան հետ կապուած մատչելիութեան բոլոր կիրառելի չափանիշներուն՝ որպէսզի դուք ստանաք իրաւական արտօնութիւնները: Սակայն, գույքը պէտք է CASp-ի մը կողմէ ստուգուած ըլլայ՝ Նախքան որեւէ պահանջ ներկայացուիլը: Զեր բարելաւումներու ժամանակացոյցին համաձայն խախտումները ուղղելու ուղղութեամբ արձանագրուած յառաջընթացը պիտի նուազեցնէ կամ վերացնէ ձեր պատասխանատուութիւնը:

ԻՆՉ ՊԻՏԻ ՍՏԱՆԱՔ ԶԵՐ CASp-ԷՆ

ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԳՐԱԻՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
Իրաւական արտօնութիւններ ստանալու համար համաձայնագիրը պէտք է Նշէ, որ CASp-ը ձեզի պիտի տրամադրէ ստուգում եւ հաշուետուութիւն՝ համաձայն Զաղաքացիական Օրէնսգիրքի 55.53 բաժինին մէջ Նշուած Շինարարութեան Հետ Կապուած Մատչելիութեան Չափանիշներու Համապատասխանութեան Օրէնքին (CRASCA):

ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒՄԻԹԻՒՆ

Այս փաստաթուղթը պիտի ներառէ ստուգուած տարածքներուն նկարագրութիւնը, ստուգման թուականը եւ ձեր համապատասխանութեան կարգավիճակի որոշումը:

ԿԻՐԱՌԵԼԻ ԶԱՓԱՆԻՇՆԵՐՈՒՆ ԿԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԷ

Ստորագրուած եւ թուագրուած ստուգման հաշուետուութիւն մը, որ կը Նշէ, թէ CASp-ի կարծիքով՝ ստուգուած տարածքները կը համապատասխանէին շինարարութեան հետ կապուած մատչելիութեան պահանջներուն:

CASp-Ի ՄԸ ԿՈՂՄԷ ՍՏՈՒԳՈՒԱԾ

Ուղղման կարիք ունեցող որեւէ տարածքի եւ պահանջուող ուղղման Նշումը պարտադիր է: CASp-ը կրնայ ձեզի հետ աշխատիլ՝ ուղղումներէն իւրաքանչիւրին համար աւարտման ողջամիտ ժամանակացոյց մը սահմանելու Նպատակով:

ՀԱՇՄԱՆՂԱՄՈՒԹԵԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹԵԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

CASp-ի կողմէ տրամադրուած հաշմանդամութեան մատչելիութեան ստուգման վկայականը կրնայ ցուցադրուիլ հաստատութեան մէջ: Մենք կը յանձնարարենք գումարու պատճեն մը ցուցադրել եւ բնօրինակը պահել ապահով վայրի մը մէջ:

ԻՆՉ ՊԻՏԻ ՀԱՐՑՆԷ CASp-Ը ԶԵՉՄԷ

1. Շինարարութեան թուական՝ _____
2. Նախկին բարելաւումներու/վերանորոգումներու տարածքներն ու թուականները՝

3. Հանրութեան համար մատչելի տարածքներ (Յաճախորդներ)՝
 - ☐ Մանրածախ առեւտուրի / Ճաշարահի / Ժողովներու տարածք
 - ☐ Կայանատեղի
 - ☐ Զուգարան(ներ)
 - ☐ Այլ՝ _____

Եթէ պատասխաններուն մէջ վստահ չէք, ձեր CASp-ը կրնայ կատարել անհրաժեշտ ուսումնասիրութիւնը կամ ձեզ ուղղութիւն տալ՝ տեղեկութիւնը գտնելու համար: